Ներկայացնել
աշխատակազմի քարտուղարին
Համայնքի ղեկավարի տեղակալ
17.11.23թ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023ԹՎԱԿԱՆԻ N-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի,համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2023 թվականի երրորդ նստաշրջանի հերթական նիստի օրակարգը

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի28-ի N 68 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի28-ի N 70 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
3.Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու և հասցեվորման օբյեկտների անվանման մասին
4.Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը,համայնքի սեփականություն ճանաչված գույքը օտարելու մասին
5.Ակունք համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստ հրավիրելու մասին
Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

Ներկայացնել
աշխատակազմի քարտուղարին
համայնքի ղեկավար

23 թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28 ՀՈԿՏՈՄԲԵՐԻ 2023ԹՎԱԿԱՆԻ N-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 68 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԵԼԼԻ ԱԲԱՋՅԱՆ

Համաձայն«Նորմատիվ իրավական ակտեր մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների,համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով Ակունք համայնքում իրականացվող ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտերը հաստատելու մասին»N 68 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
1)որոշմամբ հաստատված «Հավելվածը» շարադրել նոր խմբագրությամբ համաձայն«Հավելվածի»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՆԵԼԼԻ ԱԲԱՋՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 68 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Քանի որ ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման մեջ տեղի են ունեցել փոփոխություններ, ըստ որի այսուհետ հնարավորություն է տրվում մանկապարտեզի շենքի կառուցման հետ մեկտեղ ներկայացնել նաև տարածքի բարեկարգման և անհրաժեշտ գույքի ձեռքբերման հայտ՝ համայնքի կողմից նախկին 65%-ի փոխարեն 30% մասնաբաժնով, ուստի անրաժեշտություն առաջացավ «Նոր Գյուղ բնակավայրի մանկապարտեզի բակի բարեկարգում, տարածքի ցանկապատում, խաղահրապարակի կառուցում» և «Նոր Գյուղ բնակավայրի մանկապարտեզի գույքի ձեռքբերում» սուբվենցիոն ծրագրերը ներկայացնել հաստատման մեկ հայտով:

Միաժամանակ նշենք, որ հաշվի առնելով Ակունք համայնքի Ակունք բնակավայրի 13-րդ փողոցի անբարեկարգ վիճակը՝ անհրաժեշտություն առաջացավ այն ևս ներառել 2024թ սուբվենցիոն ծրագրերում:

Այսպիսով, անհրաժեշտություն է առաջացել Ակունք համայնքի ավագանու 27/10/2023թ. N 68 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ և ներկայացնել համայնքի ավագանու քննարկմանը:

ՏԵՂԵԿԱՆՔ

« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 68 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ և ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ համայնքի բյուջեում նախատեսվում է ծախսերի ավելացում:

ՏԵՂԵԿԱՆՔ

« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 68 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանու սույն որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չկա:

Հավելված
Ակունք համայնքի ավագանու
. . 2023թ N որոշման

ՀՀ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐ

N	ԲՆԱԿԱՎԱՅՐԸ	ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ
1	Կոտայք	Կոտայք բնակավայրի ջրամատակարարման համակարգի բարելավում
2	Նոր Գյուղ	Ակունք համայնքի Նոր Գյուղ բնակավայրի մանկապարտեզի բակի բարեկարգում, տարածքի ցանկապատում, խաղահրապարակի կառուցում և անհրաժեշտ գույքի ձեռքբերում»
3	Ակունք Նոր Գյուղ Կապուտան Կոտայք Զառ Հատիս Զովաշեն Սևաբերդ	Ակունք բնակավայրի 13-րդ, 17-րդ և 18-րդ, Նոր Գյուղի 12-րդ, Կապուտանի 3-րդի շարունակության և 9-րդ, Կոտայքի 1-ին, Զառի Ռ.Վասիլյան, Հատիսի 1-ին, Զովաշենի 2-րդ, Սևաբերդի 2-րդ փողոցների ասֆալտապատման աշխատանքներ
4	Հատիս Սևաբերդ Զովաշեն	Կոյուղագծերի մաքրման մեքենայի ձեռքբերում

Հանձնաժողովի նիստի արձանագրությունը
Համաձայն է՝ 17.11.2023թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023ԹՎԱԿԱՆԻ N-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 70 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հեկ. ՐԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Համաձայն«Նորմատիվ իրավակա ակտերի մասին օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների,հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2023թվականի նոյեմբերի 16-ի N 01/05/07505-2023 գրությունը,Ակունք համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2023թվականի հոկտեմբերի 27-ի«Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը,համայնքի սեփականություն ճանաչված գույքը օտարելու և վարձակալության իրավունքով տրանսմադրելու մասին»N 70 որոշման մեջ կատարել փոփոխություններ.
1)որոշմամբ հաստատված հավելված 2- 4 շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելված 2-4-ի:
2)որոշման նախաբանում «76-րդ հոդվածների» բառերից հետո լրացնել«Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման»բառերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 70 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Կոտայքի մարզպետի 16.11.2023թ.N 01/05/07505-2023 գրության համաձայն՝ համայնքի ավագանու 27.10.2023թ. № 11 նիստի որոշումների վերաբերյալ ներկայացվել է հետևյալը.

№ 70 որոշման մեջ ընդլայնվող հողամասերի վերաբերյալ որևէ տվյալ նշված չէ, ինչպես նաև բացակայում է հողումը համապատասխան իրավական ակտերին,

- համայնքի սեփականություն համարվող գույքը ինքնակամ շինության կառուցապատողին օտարելու վերաբերյալ հավելվածում պարզ չէ թե ում է օտարվում,
- վարձակալությամբ տրամադրելու վերաբերյալ հավելվածում պարզ չէ մրցութային կարգով է տրամադրվում, թե՝ ոչ:

Առաջարկվում է օրենքով սահմանված ժամկետում որոշումը համապատասխանեցնել գործող օրենսդրության պահանջներին, ձեռնարկել միջոցներ նմանատիպ խախտումները բացառելու ուղղությամբ և տեղեկատվություն ներկայացնել մարզպետի աշխատակազմ:

Ուստի անհրաժեշտ է՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2023թվականի հոկտեմբերի 27-ի«Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը,համայնքի սեփականություն ճանաչված գույքը օտարելու և վարձակալության իրավունքով տրանմադրելու մասին»N 70 որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ.

1)որոշմամբ հաստատված հավելված 2- 4 շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելված 2-4-ի:

2)որոշման նախաբանում «76-րդ հոդվածների» բառերից հետո լրացնել«Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման»բառերը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 70 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն որոշման նախագծի ընդունման կապակցությամբ համայնքի բյուջեում եկմուտների և ծախսերի ավելացում կամ պակասեցում չի նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ , ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չկա :

Ձեր կարծիքն ունենալ
աշխատակազմի քարտուղարի
հանձնարարությամբ Հ. Ռուբենյան
17.11.2023թ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023ԹՎԱԿԱՆԻ N-

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՐԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 22-րդ կետերի,Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման,հիմք ընդունելով միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունները,համայնքի ավագանին որոշում է՝

1.Փոխել հողամասերի նպատակային նշանակությունը համաձայն հավելված1-ի:
2.Հասցեավորման օբյեկտները անվանել համաձայն հավելված 2-ի:

Համայնքի ավագանու անդամներ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ**

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Համայնքի զարգացման ծրագրով նախատեսված ծրագրերը իրականացնելու նպատակով ՝համայնքի բյուջեի եկամուտները ապահովելու համար,համայնքում իրականացվող ներդրումային ծրագրերին նպաստելու նպատակով, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, հիմք ընդունելով «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» դրական եզրակացությունները, անհրաժեշտ է փոխել հողամասերի նպատակային նշանակությունները: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման,հողերի նպատակային նշնակության արդյունքում փոփոխված նոր առաջացած օբյեկտներին անհրաժեշտ է տրամադրել հասցեներ:

ՏԵՂԵԿԱՆՔ

« ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու և հասցեավորման օբյեկտների անվանման մասին համայնքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ համայնքի բյուջեում եկամուտների զգալի ավելացում է նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«՝ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ, ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու և հասցեավորման օբյեկտների անվանման մասին համայնքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չկա:

Հավելված 2
Համայնքի ավագանու
27.10.2023թ. թիվ 70 որոշման

Աղյուսակ

Համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղակի վաճառքով ընդլայնման նպատակով օտարելու

Լոտ	Անվանումը	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը / հա /	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը	Կադաստրային արժեքը 1 քմ /դրամ/	Ելակետային վաճառքի գին /դրամ/	Ընդլայնվող հողամաս			Սահմանափակումներ
									Սեփականատեր	Մակերեսը / հա /	Կադաստրային ծածկագիր	
1	Հողամաս	Ակունք համայնք	07-038-0113-ից	0.08	Գյուղատնտեսական	Այլ հողատեսք	6.75	400 000	Քնարիկ Միքաելյան	0.5	07-038-0113-0013	Չկան
2	Հողամաս	Ակունք համայնք	07-049-0019-ից	0.0143	Բնակավայրերի	Բնակելի կառոցապատման	2887.5	500 000	Արթուր Սաֆարյան	0.187	07-049-0220-0009	Չկան
3	Հողամաս	Ակունք համայնք	07-049-0220-ից	0.05458	Գյուղատնտեսական	Այլ հողատեսք	6.75	400 000	Մարինե Ստեփանյան	0.07444	07-049-0019-0011	Չկան

Հավելված 3
Համայնքի ավագանու
27.10.2023թ. թիվ 70 որոշման

Համայնքային սեփականություն ճանաչված անշարժ գույքի օտարումը ինքնակամ շինությունը կառուցողին ուղղակի վաճառքով

Լոտ	Անվանումը	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը / հա /	Նպատակային նշանակությունը	Ձեռքբերումը	Գործառնական նշանակությունը	Կադաստրային գնահատականը /դրամ/	Վաճառքի գինը / դրամ /	Ինքնակամ կառուցողի անունը	Սահմանափակումներ
1	Հողամաս Շենք-շինություն	Ակունք համայնք	07-038-0005-ից	0.00972	Բնակավայրերի		Բնակելի կառուցապատման	233 420	233 420	Կարեն Ղազարյան	Չկան
2	Հողամաս Շենք-շինություն	Ակունք համայնք	07-027-0210-ից	0.00813	Բնակավայրերի		Բնակելի կառուցապատման	145 396	145 396	Հայկ Հարությունյան	Չկան

Հավելված 4
Համայնքի ավագանու
18.08.2023թ. թիվ 70 որոշման

Աղյուսակ

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալությամբ տրամադրելու

Լոտ	Անվանումը	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը / հա /	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը	Տրամադրման եղանակը	Տրամադրման կարգը	Վարձակալության ժամկետը (տարի)	Մեկնարկային վարձավճարը / դրամ /	Սահմանափակումները
1	Հողամաս	Ակունք համայնք	07-038-0102-ից	0.1	Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների	Կոմունալ ենթակառուցվածքների	Կառուցապատման	Մրցույթային	5	30 000	Չկան
2	Հողամաս	Ակունք համայնք	07-049-283-ից	0.05	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	Պահեստարանների	Կառուցապատման	Մրցույթային	5	10 000	Չկան

Հավելված
Համայնքի ավագանու
28.11.2023թ. թիվ որոշման

ՑՈՒՑԱԿ
Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու

Լոտ	Անվանումը	Գտնվելու վայրը	Ծածկագիր	Մակերես / մ2 /	Հողամասի կադաստրային գործառնական նշանակությունը	Ընդհանուր գործառնական նշանակությունը	Հասցե	Ընդհանրացված գործառնական նշանակությունը ըստ գործող գոտիավորման քարտեզի	Սեփականատեր ոչ սեփականատեր	Սահմանափակումներ
1	Հողամաս	Ակունք համայնք, գ.Նոր գյուղ	07-049-0282-0062	0.01	Գյուղատնտեսական" Այլ հողատեսք	Բնակավայրերի" Հասարակական նշանակության	Մարզ Կոտայք, համայնք Ակունք գ.Նոր գյուղ, 1-ին փողոց, 4/2 հողամաս	Միջգեոտեսչական հանձնաժողովի եզրակացություն N107	Քաղաքացու	Չկան

Հանձնաժողովի
ամփոփագրի փաստաթղթերն
Դատավարության
ղեկավար 17.11.23թ

ՆԱԽԱԳԻԾ 70

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ2023ԹՎԱԿԱՆԻ N-

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ,ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՐԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ, 67-րդ հոդվածների,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21 կետի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման,համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմային համապատասխան՝ համայնքի ավագանին որոշում է՝

1"Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը օտարել.
1)աճուրդ-վաճառքի միջոցով և հաստատել մեկնարկային գներ՝ համաձայն հավելված 1-ի,
2)ուղղակի վաճառքով,ընդլայնման նպատակով և հաստատել ուղղակի վաճառքի գին համաձայն հավելված 2-ի,
2.Ինքնակամ շինությունների օրինականացման նպատակով համայնքի սեփականություն ճանաչված գույքը օտարել ինքնակամ շինությունը կառուցողին և սահմանել վաճառքի գին համաձայն հավելված 3-ի:

Համայնքի ավագանու անդամներ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՐԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ , ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Համայնքի զարգացման ծրագրով նախատեսված ծրագրերը իրականացնելու նպատակով՝համայնքի բյուջեի եկամուտները ապահովելու համար,տնտեսական ծրագրերի իրականացմանը նպաստելու,համայնքում իրականացված ինքնակամ շինությունները օրինականացնելու նպատակով համայնքի սեփականություն ճանաչված գույքը կառուցապատողին օտարելու, Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ, 67-րդ հոդվածների,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21 կետի,ՀՀ կառավարության 26"05"2016թ"N 550-Ն որոշման,համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմային համապատասխան՝ անհրաժեշտ է օտարել համայնքային սեփականության հողամասեր և համայնքի սեփականություն ճանաչված գույքը:

ՏԵՂԵԿԱՆՔ

« ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ , ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համանքին սեփականության համարվող գույքը օտարելու մասին համայնքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ համայնքի բյուջեում եկմուտների զգալի ավելացում է նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ , ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համանքին սեփականության համարվող հողամասերը օտարելու, մասին համայնքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չկա :

Հավելված 1
Համայնքի ավագանու
28.11.2023թ. թիվ որոշման

Աղյուսակ

Համայնքային սեփականություն հանդիսացող հողերի աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու

Լոտ	Անվանումը	Գտնվելու վայրը	Ծածկագիր	Մակերեսը / հա /	Նպատակային նշանակությունը	Հողաշերտը	Գործառնական նշանակությունը	Կադաստրային գնահատականը / դրամ/	Գեոդեզիական կետի	Սկզբնական գին / դրամ/	Սահմանափակումներ
1	Հողամաս	Ակունք համայնք	07-049-0019-ից	0.05	Բնակավայրերի		Բնակելի կառուցապատման	2887.5	1	1 500 000	Չկան

<մասնակցի անվանումը կամ անունը, ազգանունը, հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն>

Հոտ	Անվանումը	Գնային առաջարկի	Ծածկագիրը	Մատակարարման ժամկետը	Մատակարարման պայմանները	Հանձնման ենթակա ապրանքի անվանումը, տեսակը, մակնիշը, արտադրողը, արտադրության երկիրը, վերջնական օգտագործողը	Հանձնման ենթակա ապրանքի չափաքանակը	Հանձնման ենթակա ապրանքի գինը /դրամ/	Հանձնման ենթակա ապրանքի գումարը /դրամ/	Գնահատողական հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները	Գնահատողական հանձնաժողովի անդամների մասնագիտությունները	Գնահատողական հանձնաժողովի անդամների մասնագիտությունները
1	ոսկեներկ փոշի ոսկեներկ	Սիմոն Եղիազարյան	07.049.0277-ից	Անմիջապես	Գնումներ Գործարքներ	0.0717	4 469 420	4 469 420				Շուտ

Հանձնարարություն
ապահովագրության գործընթացի
իրականացման մասին
17.11.23

ՆԱԽԱԳԻԾ 71

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023ԹՎԱԿԱՆԻ N-

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

Համաձայն«Տեղական ինքնակառավարան մասին» օրենքի 62-րդ հոդվածի,Ակունք համայնքի ավագանին որոշում է՝

1.Ակունք համայնքի ավագանու երրորդ՝ աշնանային նստաշրջանի հերթական նիստը հրավիրել 2023 թվականի 25-ին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ**